Հաստատում եմ՝
Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի
Հ.1 հիմնական դպրոցի

Տնօրեն՝ ----------*Ս. Գևորգյան*

«31» օգոստոսի, 2023-2024ուստարի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Սիսիանի համար 1 հիմնական դպրոց

ուսումնական հաստատության անվանումը

3 -րդ«ա» դասարան

դասարան

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՍՄԲԱՏ

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2023-2024ուստարվա 1-ին կիսամյակում 3-րդ«ա» դասարանի աշակերտների քանակը 21 է,որից 8-ը աղջիկ,13-ը՝ տղա։ Դասարանում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ։ Աշակերտները համերաշխ են, ընկերասեր, սիրով են հաճախում դպրոց։ Դասարանում սովորում է ԿԱՊԿՈՒ 1 աշակերտ,որի հետ տարվում են համապատասխան աշխատանքներ։ Դասընկերները նրա նկատմամբ հոգատար են և սիրալիր։

Հայեցի դաստիարակություն

1. **Հոգևոր դաստիարակություն**

Զրույցների և պատմական փաստերի միջոցով ծանոթացնել Հայաստանի քրիստոնեության ընդունմանը։ Հայ ականավոր գործիչների կերպարների օգնությամբ երեխաների մեջ խորացնել հայ քրիստոնյա քաղաքացու ձևավորումը։ Ծանոթացնել ազգային ավանդույթներին և տոներին։ Հաճախակի այցելել քաղաքում գտնվող եկեղեցի, պատկերասրահ, թանգարան։ Աշակերտների մեջ սերմանել գթասրտություն, սեր, հավատ, համբերություն, հավատարմություն ու հանդուժողականություն։ :

2. **Գեղագիտական դաստիարակություն**

Աշակերտներին կապել գեղեցիկի աշխարհի հետ : Սովորեցնել շրջապատող կյանքում լիաթոք զգալ, հասկանալ,գնահատել գեղեցիկն ու հաճելին։ Բացասական վերաբերմունք ձևավորել վատի և անընդունելիի նկատմամբ։Ձևավորել մշակույթ կրող, ստեղծագործող անձ։ Խթանել աշակերտներին՝ճանաչելու իրենց հակումներն ու հետաքրքրությունները արվեստի նկատմամբ։

3. **Ռազմահայրենասիրական դաստիարակություն**

Աշակերտների մեջ ձևավորել հարգանք պետության, իշխանության, իր անձի, իր ժողովրդի անկախության, ազատության, արժանապատվության նկատմամբ: Սովորեցնել ձգտել խաղաղության, պահպանել աձնական կարգապահություն կյանքի բոլոր ոլորտներում : Հարգանքով և հպարտությամբ լցնել աշակերտների սրտերը հայոց պետականության, բանակի, խորհրդանիշների, տոների, ազգային հերոսների հանդեպ: Բացատրել հայրենիքի, բանակի մեծ դերը ազգի պահպանության գործում: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն : Փաստացի օրինակով երեխաների մեջ ամրապնդել սեր և հաանդուրժողականություն ժողովրդի նկատմամբ:Իրազեկել մեծ հայրենասերների և հերոսների կատարած սխրանքների մասին:

4. **Ֆիզիկական դաստիարակություն**

Զարգացնել աշակերտների շարժողական որակները.դիմացկունությունը, ուժը, ճարպկությունը, արագությունը՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Զարգացնել շարժողական կարողություններն ու հմտությունները՝քայլք,վազք; Սովորեցնել ճիշտ կազմել օրվա սննդի, քնի ,հանգստի ճիշտ ռեժիմը:

5. **Աշխատանքային դաստիարակություն**

Աշակերտների մեջ սերմանել աշխատանքի և աշխատավոր մարդու նկատմամբ դրական վերաբերմունք, այնպես անել,որ աշխատասիրությունը վերածվի ամենօրյա սովորույթի: Ձևավորել անհատական և կոլեկտիվ աշխատանքային կարողություններ: Նրանց մեջ ձևավորել աշխատելու մշտական պահանջմունք:Սովորեցնել աշխատելիս զուգակցել մտավոր և ֆիզիկական աշխատանքի ձևերը:

6. **Բնապահպանական դաստիարակություն**

Ձևավորել սեր և հոգատար վերաբերմունք,բնության, շրջակա միջավայրի հանդեպ: Մասնակից դարձնել համադպրոցական, համաքաղաքային, համապետական շաբաթօրյակներին: Հաճախակի էքսկուրսիաների միջոցով ծանոթացնել տարատեսակ բույսերի հետ, սովորեցնել խնամել դրանք,սիրել ու հոգ տանել դրանց մասին,իմանալ դրանց կարևորությունը:

7. **Դպրոց-ընտանիք կապը**

Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ- դպրոց-ընտանիք կապը: Ծնող-ուսուցիչ փոխհամաձայնեցված աշխատանքի միջոցով բարձրացնել աշակերտների ուսման առաջադիմությունը: Հաճախակի քննարկումներ կազմակերպել նրանց օրինակելի վարքին, բարեկրթության ձևավորմանը նպաստող հնարավորինս օգտակար մեթոդների ընտրության վերաբերյալ : Ծնողների համար կարդալ մանկավարժական զեկուցումներ, անցկացնել սեմինարներ, քննարկումներ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներ

- ✓ Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:
- ✓ Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողովներ:Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ- դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական զեկուցումներ, անցկացնել սեմինարներ, քննարկումներ:
- ✓ Ուշադրության կենտրոնում պահել ուսման մեջ թերացող աշակերտներին, անհրաժեշտության դեպքում ներգրավել ուսումնական տարբեր խմբակներում:
- ✓ Դասարանում ստեղծել ծնողխորհուրդ /բաղկացած 3-5 հոգուց/ ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը, միջոցառումներին:
- ✓ Իրականացնել դասալսումներ տարբեր առարկաներից:
- ✓ Աշակերտներին տալ հայեցի, գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական, բարոյական դաստիարակություն:
- ✓ Աշակերտների մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն:
- ✓ Ակտիվ մասնակցել «Մաքուր Հայաստան» ծրագրին՝ մասնակցել և՛ դպրոցական, և՛ քաղաքային շաբաթօրյակներին:
- ✓ Հաճախակի ստուգել դասագրքերի,տետրերի կոկիկությունը , վերանորոգել դրանք, ստուգել դասերին անհրաժեշտ գրենական պիտույքների առկայությունը:
- ✓ Անցկացնել ցերեկույթներ նվիրված նշանավոր օրերին:
- ✓ Ապահովել բոլոր, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ սովորողների համար հանրակրթական ընդհանուր ծրագրերի կատարումը ըստ կրթության աստիճանների, ուսումնական առարկաների:
- ✓ Հաճախակի զրույցներ վարել բարեկրթության վերաբերյալ:
- ✓ Կազմակերպել էքսկուրսիաներ քաղաքի ներսում և քաղաքից դուրս

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՇԱԲԱԹՆԵՐԻ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը	Կատարող
1-ին	Կազմել դաստիարակչական աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման: Զրույց գիտելիքի նշանակության մասին: Դասացուցակի հանձնում, աշակերտների հերթապահության սահմանում ,կազմակերպչական անկյունի ստեղծում:	01.09.2023թ. 04.09-08.09	ՄԿԱ ուսուցիչ
2-րդ	Տարեսկզբյան ծնողական ժողովի անցկացում,ծնողխորհրդի ընտրություն: Դասասենյակի ձևավորում, կանաչապատում, ծաղիկների խնամք, դասարանի սանիտարահիգիենիկ վիճակի պահպանում:	11.09-15.09	ուսուցիչ
3-րդ	Դասագրքերի, գրենական պիտույքների ստուգում: Զրույց «Մենք Հայկի թոռնիկներն ենք՝ անկախ Հայաստանի ապագան» թեմայով	18.09-15.09	ուսուցիչ
4-րդ	Ելնելով պատերազմական իրավիճակից՝ զրուցել «Հայոց բանակի առյուծասիրտ կորյունները» թեմայով: Այցելել քաղաքային պանթեոն:	25.09-29.09	ուսուցիչ
5-րդ	Զրույց. «Աշունը իմ քաղաքում » թեմայով: Դասասենյակի ձևավորում աշնանային դեկորներով: Պաստառների ձևավորում:	02.10-06.10	ուսուցիչ
6-րդ	Ուսուցչի տոն: Շնորհավորանքի և մեծարանքի խոսքեր: Բացիկների պատրաստում: Դասալսումներ տարբեր առարկաներից:	09.10-13.10	ուսուցիչ
7-րդ	Բարեկիրթ շփում: Քաղաքավարության կանոններ: Դասարանական կանոնների սահմանում:	16.10-20.10	ուսուցիչ
8-րդ	Անձնական հիգիենայի կանոններ: Օրվա ռեժիմի կազմում: Դասասենյակի սանիտարահիգիենիկ վիճակի բարելավում: Գրենական պիտույքների ստուգում:	30.10-03.11	ուսուցիչ
9-րդ	Զրույց «Իմ առօրյան » թեմայով: Ազատ ժամանակի ճիշտ պլանավորման ցուցումներ: Այցելություն գրադարան,ընթերցանության նյութերի ընտրություն:	06.11-10.11	ուսուցիչ
10-րդ	Սպորտլանդիաների անցկացում,մրցույթների անցկացում տարբեր առարկաներից:	13.11-17.11	ուսուցիչ

11-րդ	Սենյակային բույսերի խնամք։ Դիդակտիկ պաստառների վերանորոգում,թարմացում,նորերի պատրաստում։	20.11-24.11	ուսուցիչ
12-րդ	Զրույց «Ձմեռը փռել է իր ճերմակ սավանը » թեմայով։ Ծնողական ժողովի անցկացում։	27.11-01.12	ուսուցիչ
13-րդ	Երկրաշարժի զոհերի հիշատակի օրը։ Այցելություն երկրաշարժի զոհերի հուշարձան։	04.12-08.12	ուսուցիչ
14-րդ	Նախապատրաստական աշխատանքներ `նվիրված Ամանորին։ Դասասենյակի ձևավորում։	11.12-15.12	ուսուցիչ
15-րդ	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում։ Արձակուրդներին տրվող հանձնարարություններ։	18.12-23.12	ուսուցիչ
16-րդ	Ինչպես ճանապարհեցինք անցնող տարին և դիմավորեցինք Ամանորը։ Ինչպես անցան արձակուրդները։	08.01-12.01 2024 թ.	ուսուցիչ
17-րդ	Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները դպրոցում։Պաստառի ձևավորում։	15.01-19.01	ուսուցիչ
18-րդ	Զրույց.« Մեր քաջարի զինվորները» ։Հայոց բանակի կարևոր դերն ու նշանակությունը հայերի կյանքում։	22.01-26.01	ուսուցիչ
19-րդ	Զրույց «Իմ երազանքներն ու դրանք իրականություն դարձնելու ուղիները » թեմայով։ Նպատակասլացությունը, աշխատասիրությունը, լավատեսությունը, անաչառությունը որպես կարևոր մարդկային արժեքներ։	29.01-02.02	ուսուցիչ
20-րդ	Վնասակար սովորությունների, ստի ,նախանձի բացառումը մեր կյանքում։	05.02-09.02	ուսուցիչ
21-րդ	Գիրքը մեր բարեկամն է։Ընթերցանության, գրական ստեղծագործությունների ունկդրման շաբաթ։	12.02-16.02	ուսուցիչ
22-րդ	Հ.Թումանյանի ստեղծագործությունների ուսումնասիրություն, բեմականացում, հեքիաթի, մուլտֆիլմի, ֆիլմի դիտում։	19.02-23.02	ուսուցիչ
23-րդ	Դասերի անցկացում համակարգչային դասասենյակում։	26.02-01.03	ուսուցիչ
24-րդ	Զբոսանք դպրոցամերձ այգում, ծառերի, բույսերի ուսումնասիրություն։	04.03-08.03	ուսուցիչ
25-րդ	Մայրիկներին տոնին նվիրված պաստառի, բացիկների ձևավորում։	11.03-15.03	ուսուցիչ

26-րդ	Ծնողական ժողովի , դասալսումների իրականացում։	18.03-22.03	ուսուցիչ
27-րդ	Դասագրքերի,օրագրերի, տետրերի վարման ստուգում։	01.04-05.04	ուսուցիչ
28-րդ	Դասալսումների անցկացում,դասապատրաստվածության, դասին մասնակցության դիտարկում։	08.04-12.04	ուսուցիչ
29-րդ	Անցանկալի վարքի շտկմանն ուղղված աշխատանքներ։	15.04-19.04	ուսուցիչ
30-րդ	Աշխատանք ուսման մեջ թերացող աշակերտների հետ։	22.04-26.04	ուսուցիչ
31-րդ	Զրույց «Իմ հայրենիքը» թեմայով։ : Իմ համայնքն ու նրա պատմությունը։	29.04-03.05	ուսուցիչ
32-րդ	Այցելություն եկեղեցի , պանթեոն։ Էքսկուրսիա քաղաքի ներսում։	06.05-10.05	ուսուցիչ
33-րդ	2-րդ կիսամյակի արդյունքների ամփոփում։ Առաջադիմության քննարկում	13.05-17.05	ուսուցիչ
34-րդ	Առջևում ամառ է։ Արձակուրդներին տրվող հանձնարարություններ։ Տարեկան արդյունքների ամփոփում։ Դասագրքերի վերանորոգում,ստուգում և հանձնում։	20.05-24.05	ուսուցիչ